ՎԱՂԱՐՇԱԿ ՎՐԴ. ՊՕՂՈՍԵԱՆ, ԹԷՔԻՐՏԱՂՑԻ.— Մբ. Ծ. 1877ին. Ձռ. 1902ին. քարտուղար Կիլիկիոյ Սահակ կթղ.ին 1905 ին. Ա.ռ. Զէյթունի (1906—8). յետոյ կարգաթող։

ՎԱՍԻԼ ԵՊՍ. — Գրիգոր Պարոնտէր պտրքի ժամանակ, ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը և նուիրատուութեամբ կը մասնակցի Ս. Աթոռոյ պարտուց վճարման (տե՛ս Յիշ. Պարոնտէրի). Մշ. Թ. 256 ձեռագիրին իւրաքանչիւր ճառի լուսանցքին վրայ կը գտնուի հետևեալ յիշատակարանը. «Որ ողորմի Քս. Ա.ծ. ստացողի գրոցս Վասիլ եպիսկոպոսին և կողակցին իւրոյ Տունիային և որդւոցն Հռիփսիմեին և Խաչատուրին և Ստեփանոսին. և ամ. ար»։

ՎԱՐԴԱՆ ԵՊՍ. ԱՆԿԻՒՐԻԱՑԻ.— 1562ին կ'ընդօրինակէ Աւետարան մը Անկիւրիոյ եւ Ս. Յակոբի վանքին մէջ. ստանալով զայն Անկիւրիացի մհտ. Ամիր՝ կը նուիրէ Ս. Յակոբի վանքին հետեւեալ յիշատակարանի համաձայն. «... Արդ՝ յանկ ելեալ կատարեցաւ սբ. Աւետարանս. Արդ սկսեալ եղև սբ. Աւետարանս յԱնկիւրիա քաղաքի և աւարտեցաւ ի սբ. Երսղմ. ի սբ. Յկբ. դուռն.... յեպիսկոպոսութեան տէր Աստուածատուրի եւ տէր Անդրէաս եպիսկոպոսի... յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զստացող սորա մհտեսի Պաղիին որդին մահտեսի Ամիրն և իւր կողակից մհտի. Ցայսեղիին և իւրեանց օրհնեալ որդիքն... Ա.ծ. ողորմի ասացէք ստացողին սորա. յԱնկիւրեցի մահտեսի Ամիրն ստացաւ հալալ արդեանց յիշատակ իւր և ծնողացն և իւր սիրելի որդւոյն Մուրաս Զիշիպիին հոգւոյն, եդիր յիշատակ ի դուռն Քս.ի յարութեան սբ. Գերեզմանին ի Թուականին, ի ծննդենէն Քս.ի ՌՇԿԴ (1564), ի հայոց ՌԺԱ. . . . ընդ նոսին գծող սորա և զանպիտան յԱնկիւրեցի Վարդան եպս. յիշման արժանի առնէք, զհայրն իմ Դաւիթ քհյ. պապն իմ Վարդան քհյ. եղբայրն իմ Յակոբ քհյ. փոքր եղբայրն իմ տիրացու Աստուածատուր և փեսայն իմ Սարգիս տիրացու և թոռներն իմ Յովասափ սարկաւագ, և Առիւծն, եղբայրորդիքն իմ Մինաս տիրացու, Մարտիրոս տիրացու և Յովսեփ տիրացու...» (Խաչ. Յուց. տետր ԺԱ. էջ 828—30)։ Վարդան եպս. այրեցեալ քահանայ մը ըլլալով կը բարձրանայ մինչև եպիսկոպոսութեան աստիճանի (Հայ Անկիւրիա, անտիպ)։